ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ռուբեն Մելքոնյան[*]

Կրթությունը մշտապես կարևոր տեղ է զբաղեցրել Հայության կյանքում: Աշխարհի տարբեր վայրերում հաստատված հայերը հիմնել ու զարգացրել են ազգային դպրոցներ: Ստամբուլի (Պոլիս) հայ համայնքում ևս կրթությանն ավանդաբար մեծ տեղ է հատկացվել, և պատահական չէ, որ արդեն 19-րդ դարի վերջին Պոլսում եղել է շուրջ 90 հայկական դպրոց, որոնցից 40-ը՝ թաղային, 50-ը՝ մասնավոր [1, էջ 181]: Այդ նույն ժամանակաշրջանում Պոլսի 454 դպրոցներից 174-ը պատկանում էին ոչ մուսուլմաններին (հայերին, հույներին, հրեաներին), այդ դպրոցներում գրանցված էր Ստամբուլի ընդհանուր աշակերտության մոտ կեսը՝ 16.248-ը [2, s. 18]: Արդեն 1914թ. Պոլսում գործել է 64 հայկական դպրոց, որտեղ ուսանել է 25 հազար աշակերտ [1, էջ 181]:

Թուրքական աղբյուրները, խոսելով Օսմանյան կայսրության շրջանի հայկական դպրոցների մասին, դրանք մեծ մասամբ ներկայացնում են որպես հակապետական, իմա՝ հակաթուրքական գաղափարներ ձևավորող օջախներ, որտեղ այդ տրամադրություններն էլ ավելի էին ակտիվանում Օսմանյան կայսրությունում արևմտյան միսիոներական կազմակերպությունների գործունեությանը զուգահեռ: Միսիոներներին ազգային-կրոնական փոքրամասնությունները և հատկապես հայերը, ըստ թուրքական աղբյուրների, դիտում էին որպես իրենց «անջատողական ձգտումներին» աջակցող ուժեր [3, s. 180]: Ավելի ծայրահեղական դիրքորոշում ունեցող թուրք հեղինակները գտնում են, որ *«Օսմանյան կայսրությունը քանդել, մասնատել ձգտող իմպերիալիստական արևմտյան պետությունները համագործակցել են ազգային փոքրամասնությունների հետ, որոնց դպրոցներում կրթություն են ստացել հետագայում իրենց համար աշխատող հոգևորականներ և լրտեսներ»*[1]:

Թուրքիայի Հանրապետությունում հայերի կրթական և հայկական վարժարաններ ունենալու իրավունքը հաստատված է Լոզանի պայմանագրի 40 և 41-րդ հոդվածներով [4, էջ 24]: Պոլսո հայկական դպրոցներն իրենց կառուց-

[*] «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի փոխդեկան:

[1] *Kılıç R.,* Osmanlı Türkiye'sinde azınlık okulları (19. yüzyıl), http://www.hyetert.com/yazi3.asp?s=1&Id=374&DilId=1

վածքները համապատասխանեցնում են Թուրքիայի ընդհանուր կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխություններին, և այսօր դրանցում ուսումնառությունը եռաստիճան է. մանկապարտեզ՝ 1 կամ 2 տարի, նախակրթարան՝ 8 տարի, լիցեյ՝ 3 տարի [4, էջ 11]: Ներկայումս Ստամբուլի հայ համայնքի կրթական խնդիրները մասն են կազմում ընդհանրապես Թուրքիայի ազգային փոքրամասնությունների կրթական խնդիրների, և այս առումով հետաքրքիր փաստեր են հրապարակվել 2009թ. Եվրամիության աջակցությամբ պատրաստված «Թուրքիայում խտրականության դեմ պայքարը և փոքրամասնությունների իրավունքների աջակցությունը» զեկույցում: Այսպես, ըստ այդ զեկույցում տեղ գտած տվյալների՝ որոշակիորեն երևում է Թուրքիայում ազգային փոքրամասնությունների դպրոցների և աշակերտների թվի նվազում, ինչը հիմնականում կապված է պետության վարած քաղաքականության հետ, որտեղ գերիշխում են ձուլման տարրերը: Ընդ որում, զեկույցի այն հատվածը, որը վերաբերում է կրթական վիճակին, բավական խոսուն վերնագիր ունի. «Մոռանա՞լ, թե՞ ձուլում. փոքրամասնությունները Թուրքիայի կրթական համակարգում»[1]: Ըստ ներկայացված տվյալների, 1930-31թթ. Թուրքիայում եղել է փոքրամասնությունների 117 դպրոց, իսկ 1995-96թթ. դրանց թիվն իջել է 34-ի [5, s. 14]:

Թուրքիայի Հանրապետության հիմնադրման առաջին տարում՝ 1923-ին, Ստամբուլում եղել է 47 հայկական դպրոց [6, s. 194]: 1972-73 ուստարում դրանց թիվն իջել է 32-ի՝ 7366 աշակերտով, 1999-2000 ուստարում՝ 18-ի՝ 3786 աշակերտով, իսկ 2009-2010-ին արդեն 16-ի՝ 3029 աշակերտով [4, էջ 51]: Ինչպես տեսնում ենք, ազգային փոքրամասնությունների նկատմամբ պետական քաղաքականության հետևանքով 40 տարվա (1972-2010թթ.) ընթացքում հայ համայնքը կորցրել է իր դպրոցների և աշակերտության կեսը: Ըստ պոլսահայ մանկավարժ Կարո Փայլանի. *«Ամեն տարի 150-200 աշակերտ ենք կորցնում, և եթե այսպես շարունակվի, ապա առաջիկա տարիներին ստիպված կլինենք 6-7 դպրոց փակել»*[2]:

Թուրքիայում հայկական դպրոցների թվաքանակի անկումը հիմնականում կապված է աշակերտների թվի նվազման հետ, որն ունի մի քանի պատճառ: Հարկ է նշել, սակայն, որ թուրքական պետական քաղաքականությունը ևս նպաստել է տարատեսակ խնդիրների ի հայտ գալուն: Այսպես, 1924թ. մարտի 3-ին Թուրքիայում ընդունվում է օրենք «Կրթության նույնականացման» մասին, որը պահանջում էր Թուրքիայի տարածքում բոլոր կրթական հաստատություններին իրենց գործունեությունը համապատասխանեցնել լաիցիզմի (աշխարհիկության) սկզբունքներին: Այն պոլսահայ կրթական հաստատությունների համար լուրջ դժվարություններ առաջ բերեց, քանի որ ազգային կրթօջախ-

[1] Unutmak mı, asimilâsyon mu? Türkiye'nin eğitim sisteminde azınlıklar, - http://www.hyetert.com/yazi3.asp?s=1&Id=409&DilId=1

[2] Նույն տեղում:

ներում դասավանդում էին նաև հոգևորականները, իսկ այդ օրենքի պահանջով նրանց մուտքը դպրոց արգելվեց: Բացի այդ, հայկական դպրոցներում դասավանդող ուսուցիչները ստիպված եղան որակավորման քննություններ հանձնել ստեղծված պետական հանձնաժողովներում, ձեռք բերել համապատասխան վկայականներ և նոր միայն իրավունք ստանալ դասավանդել հայկական դպրոցներում: Հարկ է նշել, որ կրթության նախարարության մասնավոր կրթական հաստատությունների 26810 թվակիր հրահանգի 32-րդ հոդվածի «ե» կետում հատուկ նշվում է, որ *«դպրոցներում պաշտոնավարող Թուրքիայի քաղաքացիների համար պայման է հանդիսանում թուրքերենի իմացությունը, թուրքերենի ճիշտ և կանոնակարգված օգտագործումը: Անհրաժեշտության դեպքում այդ դասախոսները պետք է թուրքերենի քննություն հանձնեն»* [7]: 1937թ. Թուրքիայի կրթության նախարարության կողմից ընդունվեց մի օրենք, որը պարտավորեցնում էր ազգային փոքրամասնությունների դպրոցներում պարտադիր թուրք փոխտնօրեն ունենալ՝ աշակերտներին *«թուրքական մշակույթին համապատասխան դաստիարակելու համար»* [6, s. 195-196]: Ուշագրավ է, որ հաճախ փոխտնօրենի պաշտոնին նշանակվում են ազգայնամոլական կողմնորոշում ունեցող մարդիկ: Փոքրամասնությունների դպրոցներում «Թուրքիայի պատմություն» և «Քաղաքացիական պաշտպանություն» առարկաները պարտադիր դասավանդում են ազգությամբ թուրք մասնագետներ: Փոքրամասնություններին պատկանող դպրոցներում ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկողության սահմանման խնդիրները կարգավորվում են կրթության նախարարության մասնավոր կրթական հաստատությունների 26810 թվակիր հրահանգով, որի հիմք հանդիսանում է 8/2/2007 թվականի 5580 թվակիր Հատուկ կրթական հաստատությունների մասին օրենքը [7]:

Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցելու գործընթացի համատեքստում մի շարք հետազոտություններ են անցկացվում այդ երկրում մարդու իրավունքների ոլորտի վերաբերյալ: Հետազոտություններից մեկում ազգային փոքրամասնությունների կրթական վիճակի հետ կապված խորհուրդներ կան՝ ուղղված թուրքական կառավարությանը, որոնցից մեկը փոքրամասնությունների դպրոցներում փոխտնօրենի և թուրքական մշակույթի ուսուցչի պարտադիր թուրք լինելու պայմանը վերացնելն է [8]:

Ինչպես վերը նշվեց, այսօր Ստամբուլում գործում է հայկական ընդամենը 16 կրթօջախ: Վերջին տարիներին աշակերտների թվի նվազման և ֆինանսական խնդիրների պատճառով փակվել են Բանգալթրի Անարատ հղության և Ներսեսյան-Երմոնյան նախակրթարանները: Ստորև մեջբերում ենք ներկայումս Ստամբուլում գործող հայկական կրթօջախների և աշակերտության թվաքանակի մասին ամենաթարմ տվյալներ պա-

րունակող մի աղյուսակ, որը պատրաստել է Ստամբուլի Կեդրոնական վարժարանի բազմամյա տնօրինուհի Սիլվա Գույումջյանը[1] [4, էջ 50].

	Վարժարան	Մանկապարտեզ			Նախակրթարան			Լիցեյ			Ընդամենը		
		Աղջիկ	Տղա	Ընդամենը	Աղջիկ	Տղա	Ընդամենը	Աղջիկ	Տղա	Ընդամենը	Աղջիկ	Տղա	Ընդամենը
1	Սահակյան-Նունյան	22	27	49	104	94	198	117	56	173	243	177	420
2	Տատյան	38	35	73	163	152	315	-	-	-	201	187	388
3	Եսայան	10	11	21	59	61	120	116	65	181	185	137	322
4	Մխիթարյան	21	20	41	95	80	175	36	29	65	152	129	281
5	Կեդրոնական	-	-	-	-	-	-	138	99	237	138	99	237
6	Եշիլգյուղ	31	19	50	91	84	175	-	-	-	122	103	225
7	Մերամեթչյան	17	19	36	79	85	164	-	-	-	96	104	200
8	Քարագյոզյան	30	36	66	46	73	119	-	-	-	76	109	185
9	Թարգմանչաց	15	16	31	68	54	122	-	-	-	83	70	153
10	Արամյան-Ունջյան	24	13	37	66	45	111	-	-	-	90	58	148
11	Բեզջյան	7	13	20	53	71	124	-	-	-	60	84	144
12	Լևոն Վարդուհյան	5	11	16	43	47	90	-	-	-	48	58	106
13	Գալֆայան ճեմարան	3	6	9	55	22	77	-	-	-	58	28	86
14	Սամաթիայի Անարատ հղության	6	7	13	20	27	47	-	-	-	26	34	60
15	Սուրբ խաչ Դպրեվանք	-	-	-	-	-	-	27	23	50	27	23	50
16	Բոմոնթիի Մխիթարյան	1	-	1	5	18	23	-	-	-	6	18	24
Ընդհանուր գումարը		230	233	463	947	913	1860	434	272	706	1611	1418	3029

Պոլսահայ վարժարանների վիճակի աստիճանական անկումն ունի հիմնավոր պատճառներ, որոնցից առանձնացնենք մի քանիսը.

[1] (–) նշանը ցույց է տալիս, որ տվյալ վարժարանը համապատասխանաբար չունի մանկապարտեզ, նախակրթարան կամ լիցեյ:

1. Հայ աշակերտների թվաքանակը տարեցտարի նվազում է[1]. տարիներ առաջ հայ ծնողների մեծ մասը երեխաներին ուղարկում էր գոնե հայկական նախակրթարան, որտեղ ընդհանուր գիտելիքներին զուգահեռ սովորում էին նաև հայերեն [4, էջ 28]: Սակայն այժմ պատկերն այլ է, և շատերը նախընտրում են իրենց երեխաներին տալ թուրքական, անգլիական, գերմանական դպրոցներ (լիցեյներ), որտեղ կրթական որակը բավական բարձր է [9, էջ 22] և զգալիորեն դյուրացնում է հետագայում համալսարաններ ընդունվելու հարցը:

Աշակերտների թվի նվազումն ուղղակիորեն կապված է նաև պոլսահայերի արտագաղթի հետ: Հարկ է շեշտել, որ Ստամբուլի հայկական դպրոցների աշակերտության թիվը պահպանվել կամ շեշտակի չի նվազել, օրինակ՝ 1960-ականներին, նաև շնորհիվ այն բանի, որ գավառներից բազմաթիվ հայեր տեղափոխվեցին Ստամբուլ և իրենց երեխաներին ուղարկեցին հայկական դպրոցներ:

2. Հայերեն դասագրքերը սակավաթիվ են և չեն համապատասխանում անհրաժեշտ որակին: Բացի այդ, արգելվում է դասավանդումն արտերկրում (օրինակ՝ Հայաստանում) տպագրված դասագրքերով:

3. Դպրոցներում դասավանդող ուսուցիչների պատրաստվածության մակարդակը բարձր չէ: Առօրյայում և ընտանիքում օրեցօր ծավալվող թուրքախոսության մակարդակը ևս ազդում է դպրոցների վրա, և ցավով պետք է նշել, որ հայոց լեզուն հայկական դպրոցներում շարունակաբար նահանջում է: Ուսուցիչները չեն տիրապետում հայերենին այն աստիճան, որ կարողանան դասավանդել մայրենիով, իսկ աշակերտության շրջանում մեծ նախանձախնդրություն չի նկատվում: Ինչպես նշում է Սիլվա Գույումջյանը. *«Հայերէն լեզուի ուսուցումը այսօր իջած է այնպիսի մակարդակի մը, որ կարելի չէ այլեւս հանդիպիլ՝ հայերէնի քաջատեղեակ երիտասարդի մը»* [4, էջ 13]: Հայերենի մակարդակի անկման մասին ներհամայնքային մի քննարկման ժամանակ նույնիսկ կարծիք է հնչել, որ հայերենը վերածվել է *«միջանկյալ լեզվի»* կամ *«մայրենի լեզվից թույլ, օտար լեզվից ուժեղ կարգավիճակի»* [10]: Ներկայումս համայնքի որոշ եկեղեցիներում երբեմն ստիպված քարոզը կարդացվում է նաև թուրքերեն՝ թրքախոս հատվածին հասկանալի լինելու համար: Վերջերս անցկացված սոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս, որ այսօր հայերեն կիրառում է ստամբուլահայ համայնքի ընդամենը 18%-ը [6, s. 309]:

Սիլվա Գույումջյանը նշում է, որ մինչև 1970-ական թվականները պոլսահայ դպրոցներում դասավանդել են լավ պատրաստված հայ մանկավարժներ,

[1] Պոլսի Կեդրոնական վարժարանի տնօրինուհի Սիլվա Գույումջյանի ներկայացրած տվյալներն ի ցույց են հանում նաև վերջին տասը տարում ստամբուլահայ աշակերտների թվաքանակի աստիճանական և, ցավոք, հաստատուն անկումը: Ստորև մեջբերում ենք այդ տվյալներն ըստ ուսումնական տարիների. 2000-2001 ուստարի՝ 3711 աշակերտ, 2001-2002՝ 3530, 2002-2003՝ 3401, 2003-2004՝ 3289, 2004-2005՝ 3210, 2005-2006՝ 3162, 2006-2007՝ 3099, 2007-2008՝ 3023, 2008-2009՝ 3045, 2009-2010՝ 3029 [4, էջ 47]:

որոնք նաև լավագույնս տիրապետել են մայրենիին: Այդ սերնդին հաջորդած նրանց աշակերտներն արդեն զգալիորեն զիջել են մայրենիի տիրապետման մակարդակով, որն ազդում է նրանց դասավանդման որակի և աշակերտության վրա: Ուստի, հաճախ թերի հայերենով դասավանդելու փոխարեն ուսուցչուհիները նախընտրում են թուրքերենով դասավանդումը: Այսօրվա Պոլսի հայկական դպրոցների ուսուցիչների մասնագիտական մակարդակի մասին չափազանց խոսուն է Սիլվա Գույումջյանի հետևյալ միտքը. *«Այսօր, մասնաւորաբար մեր նախակրթարաններուն մէջ չունինք այր ուսուցիչներ.* ***իսկ կիներ ընդհանրապէս իրենց տանտիկնութեան կողքին կ'ուսուցչագործեն*** (ընդգծումը մերն է- *Ռ. Մ.)»* [4, էջ 19]: Հարկ է ավելացնել նաև, որ Թուրքիայի տարածքում գործող փոքրամասնությունների դպրոցներում իրավունք չունեն դասավանդել այն անձինք, որոնք Թուրքիայի քաղաքացի չեն: Պետությունն օրենսդրորեն վերահսկողություն է սահմանում թե՛ դասավանդվող առարկաների, թե՛ դպրոցի ղեկավարման և ուսուցիչների նշանակման ոլորտներում:

Թուրքիայում բնակվող հայաստանցիների կրթական խնդիրները.- Վերջին տարիներին խնդիր է ծագել նաև Ստամբուլում ապօրինաբար բնակվող ՀՀ քաղաքացիների երեխաների՝ հայկական դպրոցներում ուսանելու հետ կապված: Խնդիրը հայ համայնքի ներկայացուցիչները բարձրացրել են Թուրքիայի իշխանությունների առջև, և սպասվում է, որ արդեն 2011-2012 ուստարվանից այդ հարցում կարող է դրական փոփոխություն արձանագրվել: Սակայն մինչև խնդրի լուծումը, արդեն 2003 թվականից Ստամբուլում, Գեդիքփաշայի Հայ Ավետարանական եկեղեցու ներքնահարկում գործում է ընդհատակյա հայկական վարժարան, որտեղ ուսանում է շուրջ 60 հայաստանցի երեխա՝ 1-ից 5-րդ դասարաններում[1]: Հայաստանցի երեխաների համար նախատեսված դպրոց ստեղծելու գաղափարի հեղինակները ստամբուլահայ Ալեքս Ուզուրօղլուն և Ստամբուլում բնակվող հայաստանցի մանկավարժ Հերիքնազ Ավագյանն են, որոնք իրենց տարածք հատկացնելու խնդրանքով ժամանակին դիմել են Պոլսո Հայոց պատրիարքությանը և մերժում ստացել: Դրանից հետո նրանց օգնության ձեռք է մեկնել և տարածք տրամադրել Հայ Ավետարանական եկեղեցու հոգևոր սպասավոր, պատվելի Գրիգոր Աղաբալօղլուն: Ուշագրավ է, որ ըստ ստացված տեղեկությունների, այդ ընդհատակյա դպրոցում դասավանդումն իրականացնում են մանկավարժական բարձրագույն կրթություն ստացած մասնագետներ, ընդ որում՝ հայաստանյան դպրոցների ծրագրերով, իսկ պատերին փակցված են Հայաստանի դրոշը, քարտեզը, օրհներգը[2]:

Խառնածին երեխաների կրթական խնդիրները.- Հայության շրջանում էնդոգամիան (ներքին ամուսնությունները) լայն տարածում ունի, և փորձ է

[1] http://www.news.am/arm/news/52487.html

[2] Նույն տեղում:

արվում դա հատկապես պահպանել Հայաստանի սահմաններից դուրս: Պոլսի համայնքում ևս էնդոգամիային մեծ ուշադրություն է հատկացվել, սակայն մի շարք գործընթացներ իրենց ազդեցությունն են թողել նաև այս երևույթի վրա, և այսօր համայնքում խառնամուսնությունները հետզհետե շատանում են, նույնիսկ հնչում են տեսակետներ, թե դրանք հասել են 40-50%-ի: Այս ամենը մտահոգիչ է. հարցին պետք է մոտենալ նաև այն տեսանկյունից, որ խառնամուսնություններն իրենց հետ բերում են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ կրոնական պատկանելության, ազգային ինքնագիտակցության և, իհարկե, կրթական: Խառնամուսնությունների թվի աճին զուգընթաց՝ հայ համայնքը մի կողմից փորձում է համակերպվել ստեղծված վիճակի հետ, մյուս կողմից՝ ելքեր է փնտրում ի հայտ եկած խնդիրների լուծման համար, որոնց շարքում կարևոր տեղ են զբաղեցնում կրթական տարատեսակ հարցեր: Խնդիրն այն է, որ Ստամբուլի հայկական կրթօջախներ ընդունվելու համար պարտադիր պայման էր, որպեսզի երեխայի երկու ծնողներն էլ լինեին հայ քրիստոնյա, և այս օրենքը փաստորեն արգելում էր խառնամուսնություններից ծնված երեխաներին՝ ցանկության դեպքում հաճախել հայկական դպրոցներ: Սակայն 2010թ. Թուրքիայի կրթության նախարարության կողմից հրապարակվել է մի շրջաբերական, որը զգալիորեն թուլացնում է այս արգելքը և սահմանում, որ հայկական դպրոց ընդունվելու համար բավարար է ծնողներից մեկի հայ քրիստոնյա լինելը: Ակնկալվում է, որ այս քայլը կարող է դրական դեր ունենալ հայկական դպրոցների աշակերտության թվաքանակի հարցում և կարող է փոխել իրավիճակը: Ավելին՝ Ստամբուլի հայկական դպրոցներում արդեն ընդունվել են խառնամուսնություններից ծնված առաջին աշակերտները, սակայն այս գործընթացն ունի մեկ այլ հետաքրքիր կողմ ևս: Ինչպես հայտնի է դառնում տարբեր աղբյուրներից, հայկական դպրոցներում նոր ընդունված աշակերտների թվում կան երեխաներ, որոնց ծնողներից մեկը մուսուլման է: Ստամբուլի Մխիթարյան դպրոցի տնօրեն Գարեգին Բարսամյանը *Hurriyet Daily News* թերթի հայազգի թղթակից Վերջիհան Զիֆլիօղլուի հետ զրույցում նշել է. *«Խառնամուսնությունների թիվն ամեն օր ավելանում է: Մեր դպրոցներն ընդունվածների մեջ կան երեխաներ, որոնք փաստաթղթերում գրանցված են որպես մուսուլմաններ, սակայն հիմա դաստիարակվում են հայկական-քրիստոնեական մշակույթով և ապագայում իրենք կընտրեն իրենց ինքնությունը»*[1]: Ուշագրավ է նաև, որ հայկական դպրոցների աշակերտների մեջ կան այնպիսիները, որոնց ծնողներից մեկը հայ քրիստոնյա է, իսկ մյուսը՝ բռնի իսլամացված հայի սերունդ: Օրինակ՝ 1915 թվականին իսլամ ընդունած մշեցի

[1] *Zifliogˇlu V.,* Ermeni Azınlık Okullarında Karma Evliliklerden İlk Jenerasyon
http://www.hurriyetdailynews.com/n.php?n=armenian-schools-open-doors-to-a-different-audience-2011-01-27

մի հայ ընտանիքի զավակ՝ 34-ամյա Այլինը, ամուսնացած է քրիստոնյա հայ տղամարդու հետ և ունի ինը տարեկան տղա երեխա, որն ընդունվել է հայկական դպրոց: Երեխայի մոր կրոնափոխ ընտանիքի անդամները շարունակում են ապրել իբրև բարեպաշտ մուսուլմաններ, իսկ հոր կողմը քրիստոնյաներ են, և այս հանգամանքն ինքնության ճգնաժամին բնորոշ երևույթներ է առաջացրել իննամյա տղայի մեջ: Սակայն ընտանիքում որոշում է ընդունվել երեխային ուղարկել հայկական դպրոց, և դրա համար բռնի կրոնափոխ ընտանիքի զավակ Այլինը բերում է հետևյալ հիմնավորումը. *«Ես չեմ կարողացել սովորել, թող գոնե տղաս իր լեզուն և մշակույթը սովորի»*[1]:

Ապրիլ, 2011թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003:
2. *Alkan M.*, Tanzimat'tan Cumhuriyet'e modernleşme sürecinde eğitim istatistikleri, Tarihsel istatistikler dizisi, Devlet İstatistik Kurumu, sayı 6.
3. *Haydaroğlu P.,* Osmanlı İmparatorluğunda yabancı okullar, Ankara, 1990.
4. *Գույումճեան Ս.,* Ակնարկ մը՝ ստանպուլահայ վարժարաններու իրականութեան, Ստանպուլ, 2010:
5. Cumhuriyet dönemi İstanbul istatistikleri, Eğitim İstanbul I (İlk, Orta, Lise, 1928 - 1996), İstanbul Külliyatı, İstanbul, 1998.
6. *Özdoğan G., Üstel F., Karakaşlı K., Kentel F.,* Türkiye'de Ermeniler: Cemaat-Birey-Yurttaş, İstanbul, 2009.
7. T.C. Resmi Gazete, 8 Mart 2008, sayı: 26810.
8. Ակօս, 14,12, 2007:
9. *Լոքմագյոզյան Տ.,* Ստամբուլի հայկական դպրոցները, «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր, Երևան, 2008, #3:
10. Agos, 11,10, 1996.

[1] Նույն տեղում:

ОБ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ ПРОБЛЕМАХ АРМЯНСТВА ТУРЦИИ

Рубен Мелконян

Резюме

Образование всегда занимало важное место в жизни армянства, осевшие в разных уголках мира армяне учреждали и развивали национальные школы. Не составляла исключения и армянская община Стамбула (Константинополя), где еще в османский период действовали многочисленные армянские образовательные учреждения. Право армян иметь образовательные и национальные гимназии в Турецкой Республике зафиксировано в 40 и 41 статьях Лозаннского договора. Сегодня образовательные проблемы армянской общины Стамбула являются частью образовательных проблем национальных меньшинств Турции в целом, и анализ разнообразных фактов свидетельствует, что во всем этом проявляется турецкая государственная политика, в которой преобладают асимиляционные элементы.

В последние годы возник также вопрос обучения в армянских школах детей нелегально проживающих в Стамбуле граждан РА, а также проявились любопытные развития, связанные с увеличением количества смешанных браков в армянской общине.